

# LET'S DO THIS – Armenian

## COVID-19-ի դեմ պատուաստում երեխաներու համար (5-11 տարեկան)

ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ  
ԱՊԱՀՈՎԵՑԷՔ  
ՀԻՄԱ՝

### Ինչո՞ւ պէտք է 5-11 տարեկան երեխաները պատուաստուին COVID-19-ի դեմ:

COVID-19-ը ժահր մըն է որ կրնայ պատճառել լուրջ հիւանդութիւն եւ մահ, ինչպէս նաեւ երկարատեւ առողջական խնդիրներ: Ան շատ հեշտութեամբ կրնայ տարածուիլ մարդոց միջեւ եւ երբեմն քիչ կամ ոչ մէկ ախտանիշ կ'ունենայ, ինչ որ կը դժուարացնէ գիտնալ որ դուք վարակուած էք, նախքան ուրիշին փոխանցելը:

Թէեւ երեխաներուն մօտ COVID-19 վարակումը յաճախ աւելի մեղմ է քան չափահասներու մօտ, երեխաներուն պատուաստուելուն աջակցելու համար կան հաստատ պատճառներ:

- Պատուաստանիւթերը կ'օգնեն ախտամերժ համակարգին: Պատուաստելով ձեր երեխային, դուք կ'օգնէք անոնց պաշտպանուելու COVID-19-էն եւ հաւանական երկարատեւ հետեւանքներէ:
- Պատուաստումը կ'օգնէ նաեւ պաշտպանելու բարեկամներ, ընտանիք եւ համայնքը, ներառեալ բոլոր տարիքի խոցելի մարդկանց, օգնելով նուազեցնելու վարակումի փոխանցումը:
- Պատուաստումը կ'օգնէ երեխաները պահելու դպրոցէն ներս եւ մասնակցելու ընկերային միջոցառումներու որոնք կարելի է անոնց ուսման եւ զարգացման համար:

Ամբողջ աշխարհի մէջ միլիոնաւոր երեխաներ արդէն պատուաստուած են COVID-19-ի դեմ: Փաստը ցոյց կուտայ որ պատուաստումը սքանչելի պաշտպանութիւն կը մատուցանէ երեխաներու մօտ COVID-19-է առաջացած լուրջ հիւանդութիւններու դեմ եւ կ'օգնէ ձեր ընտանիքը ապահով եւ առողջ պահելու:

### Երեխաները չափահասներուն պէս նոյն պատուաստանիւթերը եւ դեղաչափը կը ստանան՞:

**Ոչ:** 5-11 տարեկան երեխաներուն համար վաւերացուած պատուաստանիւթը յատուկ Pfizer (Comirnaty) մանկական պատուաստանիւթ մըն է, որը կը տրուի երկու դեղաչափով, 8 շաբաթ տարբերութեամբ:

5-11 տարեկան երեխաներու համար Pfizer պատուաստանիւթի դեղաչափը 12 տարեկան եւ աւելի մեծերուն տրուած դեղաչափին շուրջ մէկ երրորդն է: Այս տարիքային խումբին համար աւելի փոքր դեղաչափ կ'օգտագործուի քանի որ ան երեխաներուն մէջ կրնայ ապահովել պաշտպանութեան նոյն բարձր մակարդակը ինչպէս 12 տարեկան եւ աւելի բարձր տարիքի մարդոց տրուող դեղաչափը:

### Երեխաներու մօտ կողմնակի ազդեցութիւնները չափահասներուն նմա՞ն են:

**Այո:** COVID-19 պատուաստը ստանալէ ետք, երեխաներ կրնան նոյն ընդհանուր կողմնակի ազդեցութիւնները զգալ ինչպէս չափահասներ:

Այս կողմնակի ազդեցութիւնները ընդհանրապէս մեղմ են եւ մէկ կամ երկու օրէն կ'անհետանան, եւ կրնան ներառել՝

- Գլխացաւ
- Զերմութիւն եւ դող
- Յոգնութիւն / յոգնածութիւն
- Մկանային ցաւ եւ թեւի ցաւ՝ ներարկման տեղը

Փոքր կողմնակի ազդեցութիւնները բնական են եւ ցոյց կուտան որ ախտամերժ համակարգը կ'արձագանգէ պատուաստին: Պատուաստէն աւելի լուրջ կողմնակի ազդեցութիւններ շատ հազուադէպ են, եւ այդ նոյն կողմնակի ազդեցութիւններու վտանգը աւելի բարձր է քան նոյն ինքն COVID-19-ով վարակուիլը: Եթէ կողմնակի արդիւնքները շարունակուին կամ մտահոգուած էք, խօսեցէք ձեր բժիշկին հետ:

## Լուրջ կողմնակի ազդեցության վտանգը կը նշանակէ որ ես պէտք չե՞ պատուաստեմ երեխաս:

**Ո՛չ:** Աւստրալիոյ մէջ օգտագործուող բոլոր COVID-19 պատուաստանիւթերը լաւ ապահով անվտանգութեան եզրագիծեր ունին եւ, նախքան վաւերացուիլը եւ օգտագործման յանձնարարուիլը, խստօրէն փորձարկուած եւ գնահատուած են Բուժական Ապրանքներու Վարչութեան (Therapeutic Goods Administration) (TGA) եւ Աւստրալիական Պատուաստումի Տեխնիկական Խորհրդատուական Խումբին (Australian Technical Advisory Group on Immunisation) (ATAGI) կողմէ:

Մինչեւ օրս, ԱՄՆ-ի մէջ եւ աշխարհի տարածքին 5-11 տարեկան անեղի քան 5 միլիոն երեխաներ ապահով կերպով ստացած են COVID-19 պատուաստը:

## COVID-19 պատուաստը պիտի ազդէ՞ երեխայիս աճին, զարգացման, կամ ապագայի արգասաբերութեան:

**Ոչ:** Ոչ մէկ ապացոյց կայ որ COVID-19-ը կրնայ ազդել երեխայի մը աճին եւ զարգացման:

COVID-19-ի երկարատեւ ազդեցութիւնները կրնան մնայուն ազդեցութիւններ ունենալ առողջութեան եւ բարեկեցութեան վրայ: Ժահրէն վարակուելու հետ կապուած բարդութիւններու վտանգը անեղի բարձր է քան պատուաստին սովորական մեղմ կողմնակի ազդեցութիւնները:

## Երեխաս պէ՞տք է պատուաստուի եթէ ան արդէն ունեցած է COVID-19:

**Այո:** Երեխաներ որոնք ունեցած են COVID-19, պէտք է պատուաստուին հիւանդութենէն ապաքինելէն ետք՝ պաշտպանուելու համար այլ վարակումի դէմ:

## Երեխաս կրնա՞յ պատուաստուիլ առանց իմ հաւանութեան:

**Ոչ:** 5-11 տարեկան երեխաներուն COVID-19 պատուաստ ստանալու համար ծնողի մը կամ խնամակալի մը հաւանութիւնը կը պահանջուի:

Հաւանութիւն կը պահանջուի ժամադրութիւն առնելու ժամանակ, եւ դարձեալ հանդիպման ժամանակ: Եթէ ծնողը կամ խնամակալը երեխային հետ չի կրնար ներկայ գտնուիլ հանդիպման, առցանց ապահովելու ժամանակ անոնք կրնան նշանակել ուրիշ չափահաս անձ մը իրենց փոխարէն ներկայ գտնուելու հանդիպման:

Նշանակուած ուղեկցող չափահասի տուեալները պէտք է տրամադրուին ժամադրութիւն ապահովելու ժամանակ որպէսզի անոնք ինքնութիւնը եւ իբրեւ փոխանորդ հաւանութիւն տալու արտօնութիւնը կարելի ըլլայ ստուգել ժամադրութեան օրը:

Հաւանութեան մասին յաւելեալ տեղեկութեան համար այցելեցէ՛ք՝ [Vaccination consent FAQs for parents and guardians](#)

## COVID-19 պատուաստումը պարտադիր է երեխաներուն համար (ներառեալ դպրոցի եւ մարզանքի եւայլն):

**Ո՛չ:** COVID-19-ի դէմ պատուաստումը պարտադիր չէ, բայց խստօրէն կը քաջալերուի:

Դպրոցական կամ համայնքային մարզական միջոցառումներու մասնակցելու համար երեխաներուն COVID-19-ի դէմ պատուաստուելու պահանջ չկայ:

## Երեխաս կրնա՞յ խթանիչ պատուաստ ստանալ:

**Ոչ:** Պատուաստի հիմնական ընթացքը երիտասարդներու մէջ կ'առաջացնէ զօրաւոր ախտամերժ ազդեցութիւն:

ATAGI-ին պիտի քննարկէ եթէ ապագային այս տարիքային խումբին համար անհրաժեշտ է խթանիչ դեղաչափ:

## Երեխաները դպրոցը պիտի պատուաստուին COVID-19-ի դէմ:

**Ոչ:** Ձեր երեխայի COVID-19 պատուաստին համար ժամադրութիւն առէք ձեր բժիշկին միջոցով, տեղական դեղարանին, , Aboriginal Community Controlled Health Service-ի կամ NSW Health պատուաստի բուժարանի մը միջոցով:

## Ինչպէ՞ս ապահովեմ ժամադրութիւն

Ծնողներ կը քաջալերուին կարելի եղածին չափ շուտ ապահովել պատուաստումի ժամադրութիւն իրենց երեխաներուն համար

**Ապահովեցէք հիմա առցանց** - [www.nsw.gov.au/COVID-19/vaccination/get-vaccinated](http://www.nsw.gov.au/COVID-19/vaccination/get-vaccinated)

**Ապահովելու համար հեռաձայնեցէք՝** Ապահովելու օգնութեան գիծ 1800 57 11 55 / Բանաւոր եւ Գրաւոր Թարգմանութեան Ծառայութիւն (TIS): 131 450